# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ Ն 148-Ա**

**« 03 » ՀՈՒՆԻՍ 2025Թ**

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ, ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ-ի մարտի 3-ի «Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ.-ի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի դրույթներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

**1.** Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2024 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ ըստ կազմակերպությունների:

**1.1) «Ջերմուկի ԱԿ» ՓԲԸ**

2024թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 2393000 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 1196500 ՀՀ դրամ:

**1.2) «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ**

2024թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 110000 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 55000 ՀՀ դրամ:

**1.3) «Վայոց ձոր բժշկական կենտրոն» ՓԲԸ**

2024թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 6150000 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 3075000 ՀՀ դրամ:

**2.** Սահմանել, որ կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում են մինչև 2025 թվականի հոկտեմբերի 1-ը:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100 **Կ.ՄԻՔԱԵԼՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**